ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը. 00.06. - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Գաղտնիք չէ, որ օտարերկրյա ներդրումների խրախուսումը դարձել է առանձին երկրների կողմից տարվող տնտեսական քաղաքականության առանձին ուղղություն: Այն սկիզբ է առել դեռևս 1960-ականներին, երբ Հարավ-Արևելյան Ասիայի մի շարք երկրներ ակտիվորեն սկսեցին խրախուսել օտարերկրյա ներդրումները և կարճ ժամանակահատվածում հասան տնտեսական աճի և ինդուստրիալացման բարձր մակարդակի:

Օտարերկրյա ներդրումների խրախուսումը, որպես տնտեսական աճի ապահովման կարևոր լծակ, վերջին երկու տասնամյակներում դարձել է համատարած քաղաքականություն գրեթե բոլոր զարգացող, այդ թվում նաև՝ անցումային շրջանի երկրներում:

Անկախացումից հետո Հայաստանը որդեգրեց օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականություն, որն իր արտահայտությունը գտավ 1994թ. ընդունված ‹‹Օտարերկրյա ներդրումների« մասին ՀՀ օրենքում:

Փորձելով ընդհանուր գծերով բնութագրել Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումների քաղաքականությունը՝ կարելի է նշել, որ այն հիմնականում ուղղված է եղել օտարերկրյա ներդրումների համար ազատական իրավական դաշտի և ապահովության երաշխիքների ստեղծմանը:

Հաշվի առնելով Հայաստանի ներդրումային միջավայրի օբյեկտիվորեն գոյություն ունեցող լուրջ սահմանափակումները՝ երկրի անբարենպաստ աշխարհագրական դիրքը, ներտարածաշրջանային ռազմաքաղաքական անկայունությունը, ռեսուրսահումքային աղքատ բազան, ներքին շուկայի փոքր ծավալները՝ Հայաստանի տնտեսական զարգացման համար վճռորոշ գործոններ են տնտեսության մասնագիտացման նպատակով համաշխարհային շուկայի ճիշտ ոլորտների բացահայտումը, դրան համապա-

տասխան օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսման ռազմավարության ընտրությունը և իրագործումը:

Հայաստանը, լինելով փոքր ներքին շուկա ունեցող և ռեսուրսներով աղքատ երկիր՝ պոտենցիալ հետաքրքրություն է ներկայացնում հիմնականում արդյունավետության շարժառիթ և ռազմավարական ակտիվներ ձեռք բերելուն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների համար:

Ներդրումների խրախուսման ռազմավարությունը պետք է հիմնվի միջազգային պրակտիկայում կիրառվող խրախուսման միջոցների՝ վարկանիշի ձևավորման, ներդրումային ծառայությունների մատուցման և ներդրումների ուղղակի ներգրավման միջոցների ճիշտ համակցման վրա:

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության առաջին՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական աճի խթանման տեսամեթոդական հիմքերը» գլխում ներկայացվել են տնտեսական աճի էությունը և տեսակները, տնտեսական աճի գործոնները, շարժիչ ուժերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների էությունը, խրախուսման ձևերը և մեթոդները:

Ատենախոսության այս մասում հեղինակը մանրամասն անդրադառնում է տնտեսական աճի էությանը, հիմնական տեսություններին, տարբեր հեղինակների մեկնաբանություններին, ինչպես նաև «տնտեսական աճ» կատեգորիան բնորոշող բազմաբնույթ առանձնահատկություններին:

Տնտեսական աճի ձևավորման հիմքերի և դրդապատճառների բացահայտման նպատակով հետազոտվել են տնտեսական աճի գործոնները, շարժիչ ուժերը:

Հեղինակը եզրահանգում է, որ երկրների կողմից տնտեսական աճին ուղղված քաղաքականություններ վարելիս ուշադրություն պետք է դարձվի տվյալ ժամանակահատվածում տվյալ երկրի հնարավորությունների սահմաններին: Միայն այդ պարագայում ճշգրիտ կընտրվեն համապատասխան գործոնները: Ընդ որում, ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն տնտեսական աճին նպաստող, այլև՝ զսպող գործոններին:

Ատենախոսն անդրադարձել է նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների էությանը, խրախուսման ձևերին և մեթոդներին: Այս համատեքստում, ուսումնասիրվել են օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հիմնախնդիրները, որպեսզի մշակվեն ՕՈՒՆ-երի խրախուսման և ներգրավման քաղաքականության իրացման մեխանիզմներ:

Ատենախոսության երկրորդ՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումները որպես տնտեսական աճի ապահովման կարևոր բաղկացուցիչ», գլխում օտարերկրյա ուղղակի ներդրումները դիտարկվել են որպես տնտեսական աճ ապահովող առանցքային գործոն, ինչպես նաև իրականացվել է էմպիրիկ պանելային հետազոտություն՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տարբեր երկրների տնտեսական աճի վրա գնահատելու նպատակով:

ՕՈՒՆ-երի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը ուսումնասիրվել է բազմաթիվ հեղինակների կողմից: ՕՈՒՆ-երի և տնտեսության միջև փոխկապակցվածությունը ոչ միայն կրել է հետազոտական բնույթ, այլև բազմաթիվ երկրներ առաջնորդվել են տեսության արդյունքերով և դրանց հիման վրա մշակել են իրենց տնտեսական քաղաքականությունները: Այդուհանդերձ, ՕՈՒՆ-երը տվյալ երկրի համար կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ, իսկ շատ հաճախ նաև երկուսը միասին: Հեղինակը կատարված հետազոտությունների

հիման վրա եզրահանգում է, որ օտարերկրյա ներդրումներն, ընդհանուր առմամբ՝ հանրագումարային իմաստով, տնտեսության վրա ունենում են դրական ազդեցություն:

Ատենախոսի կողմից իրականացվել է ՕՈՒՆ-տնտեսական աճ փոխկապվածության էմպիրիկ պանելային հետազոտություն՝ 87 երկրների համար: Մոդելի արդյունքները վկայում են, որ ՀՆԱ-ի մեջ ՕՈՒՆ-երի մասնաբաժնի և տնտեսական աճի միջև գոյություն ունի դրական փոխկապվածություն, ընդ որում, զարգացող երկրների դեպքում այդ ազդեցությունը կարող է ավելի մեծ լինել: ՀՀ-ն, լինելով զարգացող երկիր, ևս նշված դիտարկման հիմքում է և կարող է ՕՈՒՆ-երի ներգրավման քաղաքականության արդյունքում էականորեն բարելավել երկրի տնտեսությունը և ապահովել տնտեսական աճ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով» գլխում գնահատվել են Հայաստանի մրցակցային առավելությունները ներդրումների ներգրավման հարցում, ՀՀ-ում ներդրումների ներգրավմանը խոչնդոտող գործոնները, ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և հիմնական միտումները, ՀՀ տնտեսական աճի վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցության արդյունավետության բարձացման հեռանկարները՝ ըստ ժամանակային շարքերի վերլուծության:

Գնահատելով ՕՈՒՆ-երի ներգրավման համար անհրաժեշտ նախապայմանները և գործոնները, ներկայացվել են Հայաստանի մրցակցային առավելությունները ներդրումների ներգրավման դեպքում:

Ատենախոսի կարծիքով, ՀՀ-ն ունի մի շարք առանձնահատկություններ և բավարարում է ներդրողների պահանջներն ու ներդրումային գործընթացը երկրում դարձնում ապահով և շահավետ՝ շնորհիվ առկա տնտեսական, սոցիալական, ռեսուրսային, տարածական և մի շարք այլ հատկանիշների: Վերոնշյալ ուսումնասիրությունները փաստում են, որ երկրում ներդրումների ներհոսքը կարող է ունենալ ավելի մեծ ծավալ, քանի որ այլ երկրների հետ համեմատականում հայաստանյան տնտեսական ցուցանիշները որոշ դեպքերում ավելի լավն են և գրավիչ:

Թեև երկրում իրականացվում են մի շարք միջոցառումներ, և տարվում է պետական քաղաքականություն ներդրումների ներգրավման ծավալները մեծացնելու նպատակով, այդուհանդերձ, այսօր առկա են մի շարք խնդիրներ, որոնք խոչնդոտում և

նվազեցնում են դեպի երկիր ներդրումների ծավալը, որոնց և անդրադառնում է ատենախոսը:

Աշխատանքի այս մասում մշակված տնտեսաչափական մոդելի հիման վրա ստացված եզրահանգումները փաստում են, որ արդարացված են դեպի երկիր օտարերկրյա ուղղակի ներդրումների համար մշակված բոլոր ռազմավարությունները: ՀՀ ներդրումային միջավայրի զարգացումը, ներդրումների հոսքերի ծավալների մեծացումը, ակնկալվող օգուտները և հնարավոր ազդեցությունները էապես կբարելավեն տնտեսական աճին միտված քաղաքականության հիմքերը:

Եզրակացությունում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ պանելային վերլուծության միջոցով՝ ներառելով հետազոտության հետաքրքրության մեջ առկա գործոնները, ստացվել են թվային տեսքով արդյունքներ 87 երկրներում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև առկա դրական փոխկապվածության մասին, հաստատվել է ՀՀ-ում ՕՈՒՆ-տնտեսական աճ հարաբերակցության միջև գոյություն ունեցող դրական փոխկապվածությունը, դիտարկվել են ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ազդեցությունները:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման քաղաքականության իրականացմանն ուղղված հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել տնտեսութ-

յունում օտարերկրյա ներդրումների ներգրավումն ուսումնասիրող ծրագրերի իրատեսականությանը, տնտեսական աճի վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ատենախոսության երրորդ գիտական նորույթը ձևակերպված է բավականին ծավալուն, սակայն, մեր կարծիքով, որևի խնդրի լուծում կամ նոր խնդրի բացահայտում իրենից չի ներկայացնում, այն է՝ չի համապատասխանում թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող՝ գիտական արդյունքի չափանիշներին:
2. Ատենախոսության մոտ կեսը՝ 2.1. ենթագլուխը ներառյալ, իրենից ներկայացնում է տնտեսական աճին, օտարերկրյա ուղղակի ներդրումներին, այդ ցուցանիշների փոխազդեցությանը, դրանց վրա ազդող գործոններին և այլ առանձնահատկություններին վերաբերող տեսական, ճանաչողական, դասագրքային ու ուսուցողական դրույթների ամբողջություն: Ակնհայտ է, որ կարելի էր մատնանշված ամբողջ նյութը ամփոփել առավելագույնը երկու ենթագլխում՝ մնացած մասում ներկայացնելով համաշխարհային ներդրումային միջավայրի, առհասարակ համաշխարհային տնտեսության զարգացման, առկա մարտահրավերների մասին արժեքավոր հետազոտություններ:
3. Աշխատանքի 3.1. ենթագլխում, վերլուծելով Հայաստանի մրցակցային առավելությունները ներդրումներ ներգրավելու հարցում, հեղինակը որպես մրցակցային առավելություն՝ երկրորդ կետով նշում է որակյալ, կրթված, էժան աշխատուժը: Ավելին, որակյալ և կրթված աշխատուժ ունենալու փաստը հիմնավորում է երկրում գրագիտության մակարդակով: Կարծում ենք, տեսակետը բացառապես անընդունելի է, և մարդկային կապիտալի որակը չափող բազմաբնույթ ցուցանիշներ կան, որոնք հաշվարկվում են մի շարք

կազմակերպությունների կողմից և այդ ցուցանիշներով Հայաստանը բնավ առաջատար դիրքերում չէ:

Հավելենք նաև, որ ներկայումս արդիական չէ նաև «էժան աշխատուժ» եզրույթը, քանի որ ասիական երկրների մեծ մասում (Չինաստան, Հնդկաստան, Թայլանդ և այլն) աշխատուժի արժեքն էապես ցածր է Հայաստանի համանման ցուցանիշից:

4. Ատենախոսության 3.1. ենթակետի 11-րդ մրցակցային առավելությունը ներկայացված է որպես «Բիզնեսի գործունեության նպաստավոր պայմաններ»: Այս կետում հեղինակը, հղում կատարելով Հայաստանի մրցունակության ինդեքսի՝ երեք հորիզոնականով առաջընթացին, վերջինս ներկայացնում է որպես լուրջ ձեռքբերում: Չվիճարկելով հեղինակը պնդումը, այդուհանդերձ, մրցունակության ինդեքսի և վերջինիս տասնյակ ենթաինդեքսների վերլուծությունը ակնհայտ է դարձնում, որ մրցունակությունը բնութագրող գործոնները անհամեմատ խոչընդոտում են ներդրումների նեգրավմանը, քան՝ հակառակը, և մրցունակությունը ներկայացնել որպես ներդրումների ներգրավման առավելություն, առնվազն ճիշտ չէ:
5. Աշխատանքի 3.3. ենթագլուխը նվիրված է ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկային և հիմնական միտումներին: Որևէ կերպ չի կարող հիմնավորվել, թե ինչպես կարելի է նախքան երևույթի ընթացքն ու դինամիկան վերլուծելը ներկայացնել առավելությունները և խոչընդոտող գործոնները (համապատասխանաբար՝ 3.1. և 3.2. ենթագլուխներ): Ստացվում է, որ այդ առավելություններն ու խոչընդոտները գրվել են առանց ընթացիկ վիճակին ծանոթանալու, որը վերլուծական նյութի տրամաբանական շղթայի մեջ առաջացնում է էական խզում:
6. Հետազոտության 3.4. ենթագլխի վերնագրում օգտագործվում է «տնտեսական աճի վրա ազդեցության բարձրացման հեռանկարները» արտահայտությունը, սակայն ենթագլխում որևէ հեռանկար մասին խոսք չկա:

   Ժամանակային շարքերի վերլուծության արդյունքում ցույց է տրված մի շարք գործոնների (փոփոխականների) դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա, սակայն տնտեսական աճին ուղղված ներդրումային քաղաքականութ-

յան հեռանկարների, դրանց արժեքային և ինստիտուցիոնալ գնահատականների մասին մոտեցումները բացակայում են:

Հավելենք նաև, որ ենթագլխի վերջին նախադասությունից ստեղծվում է տպավորություն, որ ՀՀ կառավարությունը ներդրումների ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ բոլոր քայլերն արել է (անում է) և ավելացնելու ոչինչ չկա:

7. Աշխատանքում տվյալները բավականին հին են (հիմնականում սահմանափակվում են առավելագույնը 2017 թ.-ով), պատկառելի քանակ են կազմում տեխնիկական թերությունները, այդ թվում՝ ուղղագրական, կետադրական, ոճաբանական սխալները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և տնտեսական աճին նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Հ.Այվազյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ ՕՈՒՆ-երի ներգրավման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Հայկանուշ Գուրգենի Այվազյանի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)» թեմայով թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06. - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏՆՕՐԵՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ՝ **Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ

11.02.2021թ.